

Ինչպէս կը տեսնուի, գործնականապէս Հայերը իրենց կարելին ըրած են՝ օգնելու համար Թուրքերու դէմ կռուող քրիստոնեայ բանակներուն: Յովհաննէս Թիւթիւնճի, որուն համար կ'ըսուի թէ իբր էջմիածինի նուիրակ շրջած է Եւրոպա և այցելած՝ Լեհաստանի կողմերը (Իլլով և Կամենից), կրնայ մասնակցած ըլլալ Եւրոպայի մէջ Թուրքերու դէմ քացուած պայքարին:

Այնպէս որ շատ զարմանալի պիտի չըլլայ, եթէ օր մը վաւերագիր մը գայ ապացուցանել, թէ Յովհաննէս Թիւթիւնճի գործնականապէս Թուրքերու դէմ կռուած է Ֆրանկներու բանակին մէջ: Այն ասան տառական կերպով ճշդուած կ'ըլլայ յիշատակարար՝ ին խօսքը, թէ՛ «այս վարդապետն եղել զլուխ ազգին Ֆռանկաց եւ եկն ի վերայ Թուրքին»:

Մինչ այդ կրնանք միայն ենթադրութիւններ ընել: 1683էն յետոյ մինչև 1698 Թիւթիւնճի զարձեալ Թափառիկ կեանք կը վարէ: Ինչպէս կ'երեւի, 1692ին անիկա կրկին Եգիպտոս գտնուած է և ինք անձամբ պատմած է իր այցը Նեղոսի ակին: Այս տեղեկութիւնը կը պարտիմ Պ. Յ. Նալբանդեանի, որ զայն գտած է Mr. l'Abbé le Mascrierի «Description de l'Egypte» գիրքին մէջ, պատրաստուած՝ Ֆրանսայի հիւպատոս M. de Mailletի նօթերուն վրայ (տպ. Փարիզ 1735):

Ասկէ յետոյ է, որ Կամենիցէն հետը առած Ս.

---

քեանց համար ստայտ պտրտուրիւն եւ անուանուեցաւ պալատի երէց կամ գաբէլլան, եւ յետոյ կանոնիկոս՝ նոյն եկեղեցիին: Ինք բրիտանեայ մկրսած է 12,000 քուբ գերիներ (Սեփաննոս Ռօսթեան, Կամենից էջ 145. իր մասին տես նաեւ Prof. Dr. Կրէլից Գրայմէտհորսթի (Dr. Fr. Kraelitz-Greifendorst) յօդուածը, Յուշարձան, Վիեննա, 1911, էջ 315 — 318):